ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ

ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

№ 38 Լ «29» օգոստոսի 2022

## 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՐՁԱՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ «ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել 2022-2023 ուսումնական տարում ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում փորձարկելու նպատակով «Օտար լեզուներ» ուսումնական բնագավառի 5-րդ դասարանի լրամշակված ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

8/26/2022

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by DUMANYAN VAHRAM 1909620211

**Հավելված**

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի**

**2022 թվականի օգոստոսի 29 -ի N38-Ն հրամանի**

«ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ

ԾՐԱԳԻՐ

5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Նախասիրություն/հոբբի
2. Աշխատանք/մասնագիտություն
3. Բնակավայր/համայնք
4. Ուղևորություն
5. Ընտանի և վայրի կենդանիներ
6. Առողջություն

| ԹԵՄԱ 1 |
|---|
| **Նախասիրություն/հոբբի** |
| Հիմնական նպատակը |
| • Ներմուծել նախասիրությունների կարևորության գաղափարը |

- Ընդլայնել նախասիրություն/հոբբի թեմային բնորոշ բառերի, արտահայտությունների և կառույցների պաշարը,
- Զարգացնել նախասիրությունների, նախընտրելի զբաղմունքների մասին կարճ կապակցված խոսք կազմելու հմտություններ,
- **Ձևավորել վերաբերմունք ազատ ժամանակը ճիշտ տնօրինելու և նախընտրած գործով զբաղվելու հանդեպ:**

| Վերջնարդյունքներ | |
|---|---|
| ***<u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝***<br><br>• Թեմային առնչվող բառապաշարը:<br>• Տրված քերականական նյութը:<br>• Նախասիրությունների/հոբբիի կարևորությունը:<br>• Ազատ ժամանակը ճիշտ և արդյունավետ տնօրինելու ձևերը: | ***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա***<br><br>• Լսել և հասկանալ նախասիրությունների և հետաքրքրությունների մասին պարզ խոսքը (տեսանյութ, ձայնագրություն և այլն):<br>• Կարդալ և հասկանալ հետաքրքրությունների/հոբբիների մասին պարզ տեքստը:<br>• Հանդես գալ իր նախասիրությունների և հետաքրքրությունների մասին նախապես պատրաստված կարճ խոսքով՝բացատրելով, թե ինչն է իրեն դուր գալիս, ինչը՝ ոչ:<br>• Պարզ արտահայտություններով վարել շատ կարճ երկխոսություն իր և իր ընկերների նախասիրությունների մասին:<br>• Պարզ խոսքային կառույցներով գրավոր նկարագրել սեփական նախասիրությունները և առօրյան:<br>• **Եզրահանգումներ անել ազատ ժամանակը ճիշտ տնօրինելու և նախընտրած գործով զբաղվելու շուրջ:** |

**Բովանդակություն**

- Ինչպե՞ս եմ տնօրինում իմ ազատ ժամանակը
- Իմ հետաքրքրությունները/հոբբին

| Առաջարկվող գործունեության ձևեր | Խաչվող հասկացություններ |
|---|---|
| • Դերախաղ՝ Իմ հետաքրքրությունները/հոբբին | **Զարգացում** |

| | |
|---|---|
| ● Նամակ՝ Ինչ եմ անում ազատ ժամանակ<br>● Պաստառ Ժամանցի ձևեր<br>● Ցուցադրություն-վաճառք<br>● Այց թանգարան, թատրոն, կինո և այլն | (նախասիրությունները/հոբբին անհատի, տվյալ դեպքում` սովորողի զարգացման գրավական) |
| **Միջառարկայական կապեր** | |
| **Մայրենի**- Շարադրել գրավոր տեքստ ազատ ժամանակի/նախասիրությունների մասին:<br>**Կերպարվեստ**-Պատկերել իր ժամանցի ձևերը:<br>**Տեխնոլոգիա**-Պատրաստել պաստառ իր հետաքրքրությունների վերաբերյալ: | |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ** | |
| **Հ3, Հ12, Հ 26, Հ31, Հ42, Հ51** | |

| | |
|---|---|
| **ԹԵՄԱ 2** | |
| **Աշխատանք/մասնագիտություն** | |
| **Հիմնական նպատակը** | |
| ● Ներմուծել աշխատանքի և մասնագիտությունների կարևորության գաղափարը<br>● Ծանոթացնել աշխատանք/մասնագիտություն թեմային բնորոշ բառապաշարին, արտահայտություններին, կառույցներին, հրահանգներին,<br>● Զարգացնել թեմայի շրջանակներում պարզ և կարճ հարցերին հիմնավորված պատասխանելու կարողությունը,<br>● **Ձևավորել հարգանք աշխատանքի և տարբեր մասնագիտությունների հանդեպ:** | |
| **Վերջնարդյունքներ** | |
| ***<u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝***<br><br>● Թեմային առնչվող բառապաշարը:<br>● Տրված քերականական նյութը:<br>● Որոշ մասնագիտությունների համար պահանջվող հմտությունները: | ***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա***<br><br>● Լսել և հասկանալ աշխատանքի և մասնագիտությունների մասին պարզ խոսքը (տեսանյութ, ձայնագրություն և այլն):<br>● Կարդալ և հասկանալ աշխատանքի և մասնագիտությունների մասին պարզ |

| | |
|---|---|
| ● Յուրաքանչյուր աշխատանքի և մասնագիտության դերը մեր կյանքում: | տեքստեր:<br>● Նկարագրել (բանավոր և գրավոր) տարբեր աշխատանքներ և մասնագիտություններ ՝ գործածելով կարճ և պարզ կառույցներ:<br>● Պարզ արտահայտություններով հակիրճ ներկայացնել իր նախընտրած աշխատանքը/մասնագիտություն:<br>● Տալ աշխատանքի/մասնագիտության կամ իր նախընտրած աշխատանքի/մասնագիտության մասին պարզ հարցեր և պատասխանել իրեն ուղղված նմանատիպ հարցերի:<br>● Վարել պարզ նամակագրություն աշխատանք թեմայով՝ ներկայացնելով իր նախընտրած մասնագիտությունները:<br>● **Բացատրել աշխատանքի և մասնագիտության կարևորությունը:**<br>● **Ճանաչել համագործակցային աշխատանքի առավելություններն ու թերությունները:** |
| **Բովանդակություն** | |
| ● Իմ փոքրիկ աշխատանքը/ներդրումը/համայնքային աշխատանք, ծառատունկ/տնային գործեր<br>● Մասնագիտությունների տեսակներ<br>● Ի՞նչ եմ ուզում դառնալ: | |
| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Խաչվող հասկացություններ** |
| ● Դերախաղ<br>● Աշխատանք նկարներով և քարտերով<br>● Արտ-կոլաժ/Պաստառ՝ Մասնագիտություն<br>● Աշխատանքային նախաձեռնություն (շաբաթօրյակ, ծառատունկ, այգու խնամք) | **Համակարգ և մոդել**<br>(աշխատանքի ընդհանուր մոդելը և դրա տարբեր բաղադրիչները, այդ թվում՝ համայնքային/կամավոր աշխատանք, պարտականությունների կատարում, մասնագիտություններ) |
| **Միջառարկայական կապեր** | |

| |
|---|
| **Մայրենի**- Կարդալ տեքստ աշխատանքի վերաբերյալ և բացատրել աշխատանքի և մասնագիտության կարևորությունը:<br>**Կերպարվեստ**-Պատկերել ծառատունկ:<br>**Տեխնոլոգիա**-Պատրաստել պաստառ շաբաթօրյակի մասին:<br>**Թվային Գրագիտություն**-Պատրաստել կարճ հոլովակ որևէ մասնագիտության/ աշխատանքի մասին՝ ներկայացնելով դրա կարևորությունը: |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ** |
| **Հ3, Հ12, Հ51** |

| **ԹԵՄԱ 3** | |
|---|---|
| **Բնակավայր/համայնք** | |
| **Հիմնական նպատակը** | |
| • Ներմուծել բնակավայրի, համայնքի և հարևանության կարևորության հիմնական գաղափարը<br>• Ծանոթացնել բնակավայր/համայնք թեմային բնորոշ բառերին, արտահայտություններին, կառույցներին, հրահանգներին<br>• Զարգացնել բնակավայր/համայնք թեմային բնորոշ պարզ արտահայտությունների համատեքստում կիրառելու հմտությունները<br>• **Ձևավորել հոգատար վերաբերմունք սեփական բնակավայրի, համայնքի հանդեպ**<br>• **Ձևավորել վարքականոնի պահպանման կարևորության գիտակցություն** | |
| **Վերջնարդյունքներ** | |
| ***<u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝***<br>• Թեմային առնչվող բառապաշարը:<br>• Տրված քերականական նյութը:<br>• Քաղաքավարի շփման կանոնները:<br>• Ժամանցի վայրերում կիրառվող վարքականոնի սկզբունքները: | ***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա***<br>• Լսել և հասկանալ բնակավայրի, համայնքի, ժամանցի վայրերի մասին պարզ խոսքը (տեսանյութ, ձայնագրություն և այլն):<br>• Կարդալ և հասկանալ բնակավայրի, համայնքի, ժամանցի վայրերի մասին պարզ տեքստեր:<br>• Պատասխանել բնակավայրի և համայնքի շուրջ իրեն ուղղված պարզ, կրկնվող հարցերին՝ |

<table>
<tr><td></td><td>հիմնավորելով սեփական կարծիքը:
<ul>
<li>Պարզ արտահայտություններով վարել շատ կարճ երկխոսություն իր բնակավայրի, ժամանցի վայրերի և համայնքի մասին:</li>
<li>Հակիրճ ներկայացնել սեփական և ուսումնասիրվող լեզվի մշակույթների որոշ առանձնահատկություններ, ժամանցի վայրեր:</li>
<li>Տալ տարածության մեջ կողմնորոշվելու համար ուղղորդող ցուցումներ (գնացեք ուղիղ, թեքվեք աջ. . . )՝ կոնկրետ ժամանցի վայր հասնելու համար:</li>
<li>Կազմել կարճ, պարզ գրավոր տեղեկություն (մինչև 80 բառ)՝ նկարագրելով իր համայնքը, բնակավայրը՝ գործածելով համապատասխան բառապաշար:</li>
<li>Բերել սեփական բնակավայրի, համայնքի նկատմամբ հոգատար վերաբերմունքի, ժամանցի վայրերում վարքի հիմնական կանոնների օրինակներ (նաև սեփական փորձից):</li>
</ul></td></tr>
<tr><th colspan="2">Բովանդակություն</th></tr>
<tr><td colspan="2"><ul>
<li>Իմ բնակավայրը (նկարագրություն, պատմական ակնարկ, հետաքրքիր փաստեր)</li>
<li>Ժամանցի վայրեր</li>
</ul></td></tr>
<tr><th>Առաջարկվող գործունեության ձևեր</th><th>Խաչվող հասկացություններ</th></tr>
<tr><td><ul>
<li>Ոչ պաշտոնական նամակ՝ Իմ համայնքը</li>
<li>Քարտեզագրում՝ ժամանցի վայրերը</li>
<li>Պաստառ՝ Իմ բնակավայրը</li>
<li>Դերախաղ՝ Իմ հարևանները</li>
</ul></td><td>Անհատներ և հարաբերություններ<br>(անհատի/սովորողի վերաբերմունքը իր համայնքի և շրջապատի նկատմամբ, քաղաքավարության և համակեցության կանոնների պահպանում)</td></tr>
<tr><th colspan="2">Միջառարկայական կապեր</th></tr>
<tr><td colspan="2">Մայրենի- Գրել նամակ՝ ներկայացնելով իր բնակավայրը/ համայնքը:<br>Կերպարվեստ - Պատկերել իր բնակավայրը / ժամանցի վայրերը:<br>Երաժշտություն-Երգել իր բնակավայրի մասին երգ:<br>Թվային Գրագիտություն- Պատրաստել թռուցիկ ժամանցի վայրերում</td></tr>
</table>

| |
|---|
| վարքականոնների/քաղաքավարության կանոնների վերբերյա։լ |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ** |
| **Հ3, Հ11, Հ17, Հ22, Հ23, Հ25, Հ34, Հ36, Հ41, Հ45** |

<table>
<tr><td colspan="2" align="center">ԹԵՄԱ 4</td></tr>
<tr><td colspan="2">Ուղևորություն</td></tr>
<tr><td colspan="2" align="center">Հիմնական նպատակը</td></tr>
<tr><td colspan="2"><ul>
<li>Ներմուծել ուղևորության, երթևեկության միջոցների, երթևեկության կանոնների կարևորության և տեսարժան վայրերի պահպանման գաղափարը</li>
<li>Ծանոթացնել ուղևորություններին, առաջիկա պլաններին, երթևեկության կանոններին վերաբերող պարզ ցուցումներին, դրանցում կիրառվող արտահայտություններին և կառույցներին</li>
<li>Զարգացնել ուղևորությունների, տեսարժան վայրերի, տեսարժան վայրերի վերաբերյալ համատեքստում  խոսքի կիրառելու հմտությունը</li>
<li>Ձևավորել հոգատար վերաբերմունք ուղևորության/ճամփորդության ընթացքում շրջակա միջավայրի հանդեպ</li>
</ul></td></tr>
<tr><td colspan="2" align="center">Վերջնարդյունքներ</td></tr>
<tr><td><u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝<ul>
<li>Թեմային առնչվող բառապաշարը:</li>
<li>Տրված քերականական նյութը:</li>
<li>Երթևեկության պարզ կանոնները:</li>
<li>Սեփական երկրի և ուսումնասիրվող լեզվի երկրի որոշ տեսարժան վայրերը և դրանց հանդեպ հոգատար վերաբերմունք դրսևորելու կանոնները:</li>
</ul></td>
<td><u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա<ul>
<li>Լսել և հասկանալ երթևեկության և ուղևորության վերաբերյալ պարզ տեքստերի հիմնական բովանդակությունը:</li>
<li>Լսել և հասկանալ երթևեկության և ուղևորության վերաբերյալ պարզ հրահանգներն ու ցուցումները:</li>
<li>Կարդալ և հասկանալ երթևեկության և ուղևորության վերաբերյալ պարզ տեքստերի հիմնական բովանդակությունը՝ ճանաչելով գործողության վայրը, ժամանակը, անունները և այլն:</li>
<li>Հանդես գալ ուղևորության, առաջիկա պլանների և բնակավայրի մասին նախապես պատրաստված կարճ խոսքով:</li>
</ul></td></tr>
</table>

| | |
|---|---|
| | ● Հակիրճ ներկայացնել սեփական և ուսումնասիրվող լեզվի մշակույթների որոշ առանձնահատկություններ, տեսարժան վայրեր:<br>● Կազմել կարճ, պարզ գրավոր տեղեկություն (մինչև 80 բառ)՝ նկարագրելով ուղևորության նպատակը, միջոցները և տեսարժան վայրերը՝ գործածելով համապատասխան բառապաշար:<br>● **Ներկայացնել ինչպես կարելի է դրսևորել հոգատար վերաբերմունք այցելվող երկրի տեսարժան վայրերի և զբոսաշրջության հանդեպ:** |

| **Բովանդակություն** |
|---|
| ● Երթևեկության միջոցներ<br>● Կողմնորոշում տեղանքում<br>● Տեսարժան վայրերի այցելություն |

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Խաչվող հասկացություններ** |
|---|---|
| ● Պաստառ՝ «Երթևեկության կանոններ»<br>● Պաստառ՝ «Տեսարժան վայրեր»<br>● Տեսանյութի դիտում՝ քննարկում<br>● Դերախաղ՝ «Ճամփորդելիս», «Երթևեկության հրահանգներ» | ***Ժամանակ և տարածություն***<br>(ճանապարհորդությունը՝ որպես աշխարհաճանաչման միջոց, նոր երևույթների և մշակույթների ծանոթանալու հնարավորություն) |

| **Միջառարկայական կապեր** |
|---|
| ***Մայրենի-*** Ներկայացնել իր նախընտրած տեսարժան վայրը:<br>**Տեխնոլոգիա-**Պատրաստել պաստառ «Երթևեկության կանոններ» -ի մասին:<br>**Թվային գրագիտություն**-Կազմակերպել հեռավար այցելություն դեպի տեսարժան վայրեր: |

| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ** |
|---|
| **Հ3, Հ30, Հ44, Հ45** |

| **ԹԵՄԱ 5** | |
|---|---|
| **Ընտանի և վայրի կենդանիներ** | |
| **Հիմնական նպատակը** | |
| ● Ներմուծել կենդանական աշխարհի բազմազանության գաղափարը,<br>● Ընդլայնել ընտանի և վայրի կենդանիներ թեմային առնչվող բառապաշարը և կառույցները,<br>● Ծանոթացնել ընտանի և վայրի կենդանիներ թեմայով տեքստերի, ուսումնական հեռուստահաղորդումների հիմնական բովանդակությանը,<br>● Զարգացնել բանավոր և գրավոր խոսքը՝ ընտանի և վայրի կենդանիներ թեմայի շրջանակում,<br>● **Ձևավորել հոգատար վերաբերմունք կենդանիների հանդեպ:** | |
| **Վերջնարդյունքներ** | |
| ***<u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝***<br><br>● Թեմային առնչվող բառապաշարը:<br>● Տրված քերականական նյութը:<br>● Ընտանի և վայրի կենդանիների տեսակները (արտաքին նկարագիրը, ապրելավայրը, ինչով են սնվում):<br>● Ընտանի և վայրի կենդանիների դերը մեր կյանքում: | ***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա***<br><br>● Լսել և հասկանալ ընտանի և վայրի կենդանիներ թեմաներով պարզ, ուսումնական հեռուստահաղորդումների հիմնական բովանդակությունը:<br>● Կարդալ և հասկանալ ընտանի և վայրի կենդանիներ թեմայի վերաբերյալ պարզ տեքստերը և գտնել անհրաժեշտ տեղեկությունները:<br>● Պարզ արտահայտությունների և կառույցների միջոցով նկարագրել ընտանի և վայրի կենդանիներին, նրանց ապրելավայրերը, սնունդը:<br>● Պարզ արտահայտություններով վարել շատ կարճ երկխոսություն կենդանիների, նրանց ապրելավայրի, պաշտպանության մասին:<br>● Կազմել կարճ, պարզ գրավոր տեղեկություն (մինչև 80 բառ)՝ ընտանի և վայրի կենդանիների վերաբերյալ՝ օգտագործելով համապատասխան բառապաշար:<br>● **Բացատրել՝ ինչպես կարելի է դրսևորել հոգատար վերաբերմունք** |

| | |
|---|---|
| | **ընտանի և վայրի կենդանիների հանդեպ:** |

| Բովանդակություն |
|---|
| • Ագարակում<br>• Կենդանաբանական այգի<br>• Կենդանիների պաշտպանություն |

| Առաջարկվող գործունեության ձևեր | Խաչվող հասկացություններ |
|---|---|
| • Այց կենդանաբանական այգի<br>• Սահիկաշար/ պաստառ Իմ սիրած կենդանին<br>• Դերախաղ՝ Ագարակում/անտառում/կենդանաբանական այգում<br>• Կարճ զեկույց Ագարակում կամ Անտառում | **Օրինաչափություն**<br>(կենդանական աշխարհի բազմազանության ճանաչում և դասակարգում՝ ըստ ընդհանրությունների և տարբերությունների) |

| Միջառարկայական կապեր |
|---|
| **Մայրենի**-սեփական բառերով վերաշարադրել տարբեր աղբյուրներից գտած կենդանիների մասին նյութը:<br>**Բնագիտություն**- Ներկայացնել կենդանիների մարմնի կառուցվածքը:<br>**Կերպարվեստ** -Պատկերել վայրի և ընտանի կենդանիներ:<br>**Երաժշտություն**-Լսել և տարբերակել կենդանիների ձայները:<br>**Թվային գրագիտություն**-հեռավար այց դեպի աշխարհի լավագույն կենդանաբանական այգիներ |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ** |
| **Հ3, Հ9, Հ11, Հ41** |

| ԹԵՄԱ 6 |
|---|
| **Առողջություն** |
| **Հիմնական նպատակը** |

| |
|---|
| • Ներմուծել ֆիզիկական ակտիվության և առողջ սնվելու կարևորության և անհրաժեշտության գաղափարը մեր կյանքում<br>• Ներմուծել և ընդլայնել առողջություն թեմային առնչվող բառապաշարը, պարզ արտահայտությունները և կառույցները<br>• Զարգացնել առողջության, առողջ ապրելակերպի/հիգիենայի, գանգատների և բժշկի ցուցումների մասին համապատասխան համատեքստում խոսելու և գրելու կարողությունը<br>• **Ձևավորել վերաբերմունք ֆիզիկական ակտիվությունը և առողջ սնունդն արժևորելու հանդեպ** |

| **Վերջնարդյունքներ** | |
|---|---|
| ***<u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝***<br><br>• Թեմային առնչվող բառապաշարը:<br>• Տրված քերականական նյութը:<br>• Առողջ և անառողջ սննդի տարբերությունները:<br>• Ֆիզիկական ակտիվության տարբեր ձևերը:<br>• Պարզ առողջական գանգատները և դրանք բուժելու պարզագույն ձևերը: | ***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա***<br><br>• Լսել և հասկանալ  առողջություն թեմայով պարզ հրահանգները, այդ թվում՝ բժշկի պարզ խորհուրդները և ցուցումները:<br>• Կարդալ և հասկանալ առողջություն և սննդակարգ թեմայի վերաբերյալ պարզ տեքստերի հիմնական գաղափարը, գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը:<br>• Պարզ արտահայտությունների և կառույցների միջոցով նկարագրել առողջական գանգատները:<br>• Պատասխանել առողջությանը, առողջ ապրելակերպի, սննդակարգի վերաբերյալ իրեն ուղղված պարզ հարցերին՝ հիմնավորելով իր կարծիքը:<br>• Նկարագրել իր նախընտրած մարզաձևը, սննդակարգը:<br>• Կազմել կարճ, պարզ գրավոր տեքստ (մինչև 80 բառ)՝ նկարագրելով իրենց կյանքում առողջ ապրելակերպի տարրերը և սննդակարգը:<br>• **Քննարկել և բացատրել՝ ինչու պետք է հետևել առողջությանը և հիգիենային:** |

| **Բովանդակություն** |
|---|
| • Գանգատներ |

| |
|---|
| • Բժշկի մոտ<br>• Բժշկական խորհուրդներ և ցուցումներ<br>• Առողջ ապրելակերպ/հիգիենա |

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Խաչվող հասկացություններ** |
|---|---|
| • Դերախաղ՝ «Բժշկի մոտ»<br>• Տեսահոլովակի դիտում և քննարկում՝ Առողջ ապրելակերպ/հիգիենա/առողջ սնունդ<br>• Պաստառ՝ Ֆիզիկական ակտիվության ձևերը | **Պատճառ և հետևանք**<br>(Անհատի/սովորողի կենսակերպի, սննդի և ֆիզիկական ակտիվության ազդեցությունը առողջական վիճակի և կյանքի որակի վրա ընդհանրապես) |

| **Միջառարկայական կապեր** |
|---|
| **Առողջ ապրելակերպ-** Կազմել օրվա ճիշտ սնվելու ռեժիմ:<br><br>**Ֆիզկուլտուրա-**Կատարել մարմնամարզություն առողջ մարմին ունենալու համար:<br><br>**Մայրենի-** Քննարկել հիգիենայի կանոնները և դրանց հետևելու կարևորությունը:<br><br>**Կերպարվեստ-** Պատկերել առողջ սնունդը պարունակող մթերքներ: |

| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ** |
|---|
| **Հ3, Հ22, Հ25, Հ47, Հ48, Հ50** |

**ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ**

**ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

**ԱՆԳԼԵՐԵՆ**

**ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՌԱՊԱՇԱՐ և ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

| Դասարան | Թեմաներ | Հնչյունաբանություն | Քերականություն | Բառեր և արտահայտություններ |
|---|---|---|---|---|
| 5-րդ դասարան | • Նախասիրություն/հոբբի<br>• Աշխատանք/մասնագիտություն<br>• Բնակավայր/համայնք<br>• Ուղևորություն<br>• Ընտանի և վայրի կենդանիներ<br>• Առողջություն | Pronunciation<br><br>Stressed and unstressed syllables | • Countable and uncountable nouns: much/many/some/any<br>• Articles with countable and<br>• uncountable nouns<br>• Adjectives and Adverbs (quick-quickly, good-well, fast-fast etc.)<br>• Comparative and Superlative Adjectives: long and short adjectives, exceptions, not as...as, the same as<br>• Adverbs of frequency: always, often, usually, sometimes, seldom, hardly ever, never<br>• Possessives ’s and s’<br>• Reflexive pronouns (myself, yourself, each other) | • **Hobbies and interests**<br>○ Entertainment<br>○ Directions<br>○ Sightseeings<br>• **Travel and Transport**<br>○ Sightseeing<br>○ Directions<br>• **Places**<br>○ Historical, Leisure, Famous etc. Places<br>○ Town and City<br>○ Countryside/ Neighbourhood<br>○ Directions<br>○ Sights<br>• **Jobs and professions**<br>○ Household Duties<br>○ Planting Trees<br>• **Animals**<br>○ On the Farm<br>○ In the Zoo<br>○ Wild and farm animals<br><br>• **Health, Medicine and Exercise**<br>○ Health Problems<br>○ At the doctor’s<br>○ Advice and Treatment<br>○ Diet<br>• **Ordinal and Cardinal Numbers** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | <ul><li>Imperative forms: directions, orders, requests</li><li>Past simple: Wh questions in the past simple</li><li>Past continuous: Wh questions in the past continuous</li><li>Modal verbs: can/could/ should</li><li>Prepositional phrases: place, time and movement</li><li>Prepositions of time: on/in/at</li><li>Linking words: first, then, next etc.</li></ul> | |

Links:

https://www.vocabulary.com/lists/1430452

https://www.examenglish.com/B2/b2_vocabulary.htm

https://www.examenglish.com/CEFR/cefr_grammar.htm

https://www.enchantedlearning.com/wordlist/astronomy.shtml

https://www.examenglish.com/CEFR/cefr_grammar.htm

My Grammar Lab A1-A2

My Grammar Lab B1-B2

**ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ**

**ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

**ԳԵՐՄԱՆԵՐԵՆ**

**ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՌԱՊԱՇԱՐ և ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

- **Das Programm ist nach dem DACHL – Prinzip entwickelt**
- **Grammatik wird nicht isoliert von der sprachlichen Anwendung unterrichtet, sondern stets in ihrem Kontext.**

| **Դասարան** | **Թեմաներ** | **Քերականություն** | **Բառեր և արտահայտություններ** |
|---|---|---|---|
| 5-րդ դասարան | ●Նախասիրություն/ հոբբի<br>●Աշխատանք/մասնա-գիտություն<br>●Բնակավայր/համայնք<br>● Ուղևորություն<br>● Ընտանի և վայրի կենդանիներ<br>● Առողջություն | Präpositionen mit Dativ: *mit, bei, zu, nach, von, aus*<br>Lokale Präpositionen mit Dativ<br>Personalpronomen im Dativ<br>Possessivpronomen im Dativ<br>Deklination mit Dativ<br>Wechselpräpositionen: *an, auf, in, vor, hinter, über, unter, neben, zwischen*<br>Reflexive Verben<br>Perfekt<br>Die Konjunktion: *dass*<br>Präpositionen mit Akkusativ: | **Freizeit/ Unterhaltung**<br>Freizeitgestaltung<br>Meine Interessen<br>**Arbeit/Beruf**<br>Mein Einsatz<br>Berufsarten<br>Was will ich werden?<br>**Wohngebiet**<br>Mein Wohnort (Beschreibung, Geschichte)<br>Unterhaltungsorte<br>**Die Reise/der** |

| | | | |
|---|---|---|---|
| | | *durch, um, gegen*<br>Pluralbildung der Substantive<br>es gibt +Akk<br>Negative Satzfrage: *doch*<br>Steigerungsstufen der Adjektive: *Superlativ*<br>Verbkonjugation: *werden im Präsens*<br>Adverbien: *meistens, manchmal, nie*<br>Das Modalverb: *sollen* | **Verkehr**<br>Verkehrsmittel<br>Wegbeschreibung<br><br>**Tiere: Haus- und Wildtiere**<br>Tierbeschreibung<br>Auf dem Bauernhof<br>Im Tiergarten<br>Tierschutz<br>**Gesundheit**<br>Krankheiten, Gesundheitsprobleme, Beschwerden<br>Beim Arzt<br><br>Gesunder Lebensstil/Hygiene |

## Literaturverzeichnis

### Buchquellen


Helbig G., Buscha J. Übungsgrammatik Deutsch, Langenscheidt. Verlag Enzyklopädie Leipzig, Berlin, München, 1995

Gerngroß G., Krenn W., Puchta H. Grammatik kreativ. Materialien für einen lernerzentrierten Grammatikunterricht. 2001

Gemeinsamer Europäischer Referenzrahmen für Sprachen Lernen, Lehren, Bezrteilen. Europarat, Strassburg, Langenscheidt, 2001

Frangou E., Schritt für Schritt ins Grammatikland. Übungsgrammatik für Kinder und Jugendliche. [Niveau A1-A2]. Eleni Frangou, Eva Kokkini, Amalia Petrowa - Ismaning - Athen: Hueber: Chr. Karabatos- 2008 - 239 c.(Deutsch als Fremdsprache. [Niveau A1-A2])

Wortschatz und Grammatik. [Texte: Agnes Holweck, Bettina Trust - Ismaning : Hueber- 2011 - 32 c.(Spielerisch Deutsch Lernen. Lernstufe 1) (Deutsch als Zweitsprache (Fremdsprache))

Wortschatzerweiterung und Grammatik. [Texte: Agnes Holweck, Bettina Trust - Ismaning: Hueber- 2011 - 32 c.(Spielerisch Deutsch Lernen. Lernstufe 2) (Deutsch als Zweitsprache / Fremdsprache)

Werner G., Langenscheidts Grammatiktraining Deutsch - Berlin etc.: Langenscheidt- 2001 - 127 S.

**Internetquellen**

https://www.europaeischer-referenzrahmen.de/

https://www.derdiedaf.com/unterrichtsmaterial/kinder-jugendliche/a1/grammatik/

http://praxis-daf.com/cornelsen/9783061217730_Gesamt_PDF.pdf

https://www.goethe.de/de/spr/kup/tsd.html

http://www.telc.net/pruefungsteilnehmende/sprachpruefungen/pruefungen/detail/telc-deutsch-a2-beruf.html#t=2

http://deutschlernerblog.de/deutschpruefungen-a2-modellpruefungen-musterpruefungen/

https://alles-zum-deutschlernen2.blogspot.com/search/label/GRAMMATIK

https://www.google.com/search?q=%C3%B6sd+pr%C3%BCfung+b1+neu&oq=%C3%B6sd&aqs=chrome.1.69i57j35i39l2j0l2j69i60j69i61l2.12273j0j7&sourceid=chrome&ie=UTF-8

https://www.integrationsfonds.at/fileadmin/user_upload/Rahmencurriculum_B1.pdf

www.klett-sprachen.de/netzwerk-neu A1/1, A1/2

https://www.hueber.de/media/36/Sicher_B1_Grammatikuebersicht.pdf

https://www.hueber.de/media/36/Sicher_B2_Grammatikuebersicht.pdf

**ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ**

**ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

**ՖՐԱՆՍԵՐԵՆ**

**ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՌԱՊԱՇԱՐ և ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

| Դասարան | Թեմաներ | Հնչյունաբանություն | Քերականություն | Բառեր և արտահայտություններ |
|---|---|---|---|---|
| 5-րդ դասարան | ●Նախասիրություն/ հոբբի<br>●Աշխատանք/մասնագիտություն<br>●Բնակավայր/համայնք<br>● Ուղևորություն<br>● Ընտանի և վայրի կենդանիներ<br>● Առողջություն | | · Le présent<br>· Les verbes à une , deux et trois bases<br>· Le futur proche<br>· L'impératif<br>· Les verbes pronominaux (se lever, se laver, s'habiller, se promener…)<br>· Le passé immédiat<br>· Les verbes du III$^{e}$ groupe (mettre, aller, faire, dire…)<br>· Le passé composé (avec *avoir* et *être*)<br>· L'imparfait (y compris le verbe *être)* | ● **Loisirs et centres d'intérêt**<br>○ Divertissement<br>○ Directions<br>○ Visites<br>● **Voyage et Transport**<br>○ Visite<br>○ Directions<br>● **Lieu**<br>○ Célèbre(s), historiques<br>○ Ville(s)<br>○Quartier/Campagne (village)<br>○ Directions<br>○ Vue<br>● **Emplois et professions**<br>○ Les tâches ménagères<br>○ Plantation d'arbres<br>● **Animaux**<br>○ À la ferme<br>○ Au zoo<br>○ Les animaux: sauvages et domestiques<br>● **Santé, Médecine** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | · Le futur simple (verbes du I et du II groupes)<br><br>· Les adjectifs et les pronoms interrogatifs<br><br>· L'adjectif (place et accord)<br><br>· Les pronoms COD et COI. Place.Emploi. (aux temps simples) | ○ Problèmes de santé<br>○ Chez le médecin<br>○ Conseils et traitement<br>○ Régime<br>**Nombres ordianaux et cardinaux** |

Site(s): https://rm.coe.int/16802fc3a8

## ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ
## ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
## ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ
## ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՌԱՊԱՇԱՐ և ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

| КЛАСС | ТЕМЫ | ФОНЕТИКА, ОРФОЭПИЯ, ОРФОГРАФИЯ | ГРАММАТИЧЕСКИЙ МАТЕРИАЛ | СЛОВА И ВЫРАЖЕНИЯ В ПРЕДЕЛАХ ПРЕДСТАВЛЕН НЫХ ТЕМ |
|---|---|---|---|---|
| **V** | **1. Увлечени е/хобби.**<br>**2. Работа, профес-** | Правописание безударных гласных, проверяемых ударением. | Морфология. Имя существительное. Род и число имени существительного. Использование в речи | **1. Увлечение/хобби.** Как я провожу свободное время. Мои интересы/хобби.<br>**2. Работа,** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **сия.**<br>**3. Место житель-ства/об-щина.**<br>**4. Поездка.**<br>**5. Домашние и дикие животные.**<br>**6. Здоровье.** | Состав слова. Однокоренные слова. | падежных форм имени существительного в различных значениях. Именительный падеж. Замена имён существительных местоимениями ОН, ОНА, ОНО, ОНИ.<br><u>Имя прилагательное.</u> Согласование имени прилагательного с именем существительным в роде, числе и падеже.<br><u>Имя числительное.</u> Сочетание имён числительных *один/одна/одно, оба/обе, два/две, двое* с именами существительными. Числа (50-100).<br><u>Местоимение.</u> Употребление различных местоимений в речи: личные, притяжательные и др.<br><u>Глагол.</u> Употребление инфинитива несовершенного и совершенного вида. Употребление инфинитива несовершенного вида с глаголами *начать, кончить, продолжить, любить, нравиться, уметь, привыкать.*<br>Употребление инфинитива совершенного вида с глаголами *забыть, успеть.* Настоящее, прошедшее и будущее время глаголов. Употребление глаголов | **профессия.** Моя работа (субботник, посадка деревьев, дела по дому). Виды профессий. Кем я хочу стать.<br>**3. Место жительства/община.** Край, в котором я живу (описание, исторический очерк, интересные факты).<br>**4. Поездка.** Средства передвижения. Ориентация на месте. Достопримечательности.<br>**5. Домашние и дикие животные.** На ферме. Зоопарк. Защита животных.<br>**6. Здоровье.** Жалобы. У врача. Советы и указания врачей. Здоровый образ жизни (гигиена). |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | *идти – ходить – пойти* и *ехать – ездить – поехать* для обозначения движения в настоящем, прошедшем и будущем времени.<br><br>Значение глаголов движения с приставками: **по**-; **при**-; **у**-; **в(о)**-, **в**-; **вы**-; **под**-. Формы несовершенного и совершенного вида глаголов движения с приставками: *приходить – прийти, приезжать – приехать* и т.д.<br><br>Наречие. Наречия, обозначающие место (*дома, там, здесь, далеко, оттуда, вниз, сюда*). Неопределённые наречия (*где-то, где-нибудь*).<br><br>Синтаксис. Предложение.<br><br>Группа подлежащего. Группа сказуемого.<br><br>**Ограниченное использование терминов.** | |

**Примечание**

В настоящем Стандарте и программе по русскому языку отсутствует раздел «Литературное чтение». В учебниках основной (5-9 классы) и средней (10-12 классы) школы данный раздел будет представлен интегрированно.

Обучение русскому языку как иностранному подразумевает использование аутентичных, поэтических и прозаических текстов на занятиях, что даёт учащимся возможность познакомиться с культурой, историей, традициями и самобытностью русского народа. Ознакомление с этими реалиями актуальны как на начальном, так и на продвинутом этапе обучения, что обеспечит расширение лингвокультурологического кругозора учащихся. С точки зрения методики преподавания иностранного языка необходимо развитие всех видов речевой деятельности и формирование языковых (лексических, фонетических и грамматических) навыков. Тематический принцип предполагает отбор художественных текстов (поэтических и прозаических) по определённым лексическим темам: **Семья, Дружба, Любовь, Природа** и др., которые

распределены по классам.